

ZS7 93.930

DOI: 10.52971/18294316-2023.26.2-86

ՄԵՐՂԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴՊԱՍԱՄԱՍՈՒՅՑԻ ՈՐԲԱՆՈՑՆԵՐՆ ԸՆՏ ՄԵԾ ԵՂԵՌԱԾ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻ ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄՆԵՐԻ¹

Հնգա Էդ. Ավագյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ
«Կումարի» պատմամշակութային արգելոց-թանգարան, Գյումրի, ՀՀ

Ամփոփում

Նախարան. «Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարում ընդգրկված հուշապատճեններում մեծաթիվ են որբահավաքի, որբանոցների, որբախնամության մասին վկայությունները: Այս համատեքստում վկայությունների ամենախոշոր և եղողինակավոր մասը բաժին է ընկնում Ամերկումի որբախնամ գործունեությանը: Բացի Ալեքսանդրապոլում ծավալած երկարատև աշխատանքից, Ամերկումը իր մասնաճյուղերն էր սփոռել նաև Արևմտյան Հայաստանի հայաշատ վայրերում: Այսպիսի որբանոցներից էր Սվազի որբանոցը, որի մասին գրում է Քաջունի Ղարազողյանը իր հուչերում: Ալեքսանդրապոլի Ամերկումի որբանոցում է հանգրվանել Բիթլսի կոտորածներից մազապործ Միհրան Ղազարյանը: Կազաչի պոստի որբանոցում աշխատանքի էր Մտել Հովհաննես Թոշունյան-Հովհաննիսյանը, որ նախ հանգրվանել էր Երգնլայի, ապա Էրզրումի որբանոցներում: **Մեթոդներ և նյութեր**. Հոդվածը գրելիս օգտագործել ենք պատմահամեմատական, պատմահետազոտական, պատմաքննական, գուգորդման, վերլուծության, ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդներ: Հոդվածը խարսխված է «Մեծ եղեռնը վերապրածներ» մատենաշարում ամփոփված և գրականության մեջ առկա նմանօրինակ նյութերի վերլուծության վրա: **Վերլուծություն**. Հուշագիրները իրենց պատումներում խոր երախտագիտություն են հայտնում միսիոներներին, որբանոցում աշխատող բժիշկներին,

Սույն գեկուցումը ներկայացվել է 2023 թ. մայիսի 19-ին կայացած «Ալեքսանդրապոլ. զթարտության քաղաք» միջազգային գիտաժողովում:

դաստիարակներին, ուսուցիչներին: Խստաբար դաստիարակությունը, որ հայ որբերը ստանում էին Ամերկումի որբանոցներում, կարևոր էր այնքանով, որ այս մանուկները դարձան խորհրդային Լենինականի և երկրի բարեկիրք հասարակության հիմքը: Արդյունքներ. Այսօր Ամերկումի որբանոցների շենքերը դեռ կանգուն են Գյումրիում, դրանք լուր վկաներն են այն ժամանակաշրջանի, երբ Ալեքսանդրապոլը ավելի քան մեկ տասնամյակ միակ զբարտության քաղաքն էր աշխարհում:

Բանալի բառեր՝ Ալեքսանդրապոլ, Սվագ, Էրզրում, Կարս, որբանոցներ, որբախնամ գործունեություն, Կազաչի պոստ:

Ինչպես հղել՝ Ավագյան Ի., *Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատուցի որբանոցներն ըստ Մեծ եղեռնը վերապրածների հուշապատճենների* // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 2 (26): 86-98 էջեր:

DOI:

THE NEAR EAST RELIEF COMMITTEE ORPHANAGES BASED ON THE MEMOIRS OF SURVIVORS OF THE ARMENIAN GENOCIDE

Inga E. Avagyan

Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri RA
"Kumayri" Historical-Cultural Reserve-Museum, Gyumri, RA

Abstract

Introduction: There are a lot of episodes of testimonies about the collection of orphans, orphanages, and guardianship of children in the series of memoirs "Survivors of the Armenian Genocide". Against this background, the lion's share of this evidence relates to Amerkom's trusteeship. In addition to developing long-term activities in the city of Alexandropol, Amerkom created a network of branches of shelters in Western Armenia, where a large number of Armenians lived. One of these orphanages was established in Sivaz and Kajuni Karageozyan writes about this in his memoirs. During the First World War, the Turkish government founded orphanages to appease society. Mihran Ghazaryan, who was deported from Bitlis, lived in the Alexandropol orphanage of Amerkom prior to his adoption. Hovhannes Trchunyan-Hovhannisyan worked in the orphanage at the Cossack post. He had miraculously escaped from the massacre before that and ended up in the Erznga orphanage, and after that - in the Erzrum orphanage. **Methods and materials:** We have used comparative-historical research, survey, combination, inductive and deductive methods. The article is based on the series of memoirs "Survivors of the Armenian Genocide" and analysis of materials available in the literature. **Analysis:** The survivors of the Armenian genocide express their deep gratitude to the missionaries, doctors who worked in shelters, educators and teachers in their memoirs. The strict upbringing that the orphans received in the Amerkom shelters was so important that these children formed the basis of the supportive society of Soviet Leninakan. **Results:** The buildings of Amerkom in Gyumri still stand today. They are silent witnesses of the era when Alexandropol was the only city of mercy in the world for more than a decade.

Key words: Orphanages of Alexandropol, Svaz, Erzrum, Kars, guardianship, Cossack post.

Citation. Avagyan I. *The Near East Relief committee orphanages based on the memoirs of survivors of the armenian genocide* // «Scientific Works» of SCAS NAS RA. Gyumri, 2023.V.2 (26). pp. 86-98. DOI:

ПРИЮТЫ БЛИЖНЕВОСТОЧНОГО АМЕРИКАНСКОГО КОМИТЕТА ПО МЕМУАРАМ ПЕРЕЖИВШИХ АРМЯНСКИЙ ГЕНОЦИД

Инга Э. Авагян

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА
Историко-культурный музей-заповедник "Кумайри", Гюмри, РА

Аннотация

Введение: В серии мемуаров «Пережившие Армянский геноцид» в большом количестве встречаются эпизоды свидетельств о соборе сирот, сиротских приютах, опеке детей. На этом фоне львиная доля этих свидетельств относится к попечительской деятельности Амеркома. Кроме развития долговременной деятельности в городе Александрополе, Амеркомом была создана сеть ветвей приютов и в Западной Армении, где проживало многочисленное армянское население. Один из таких сиротских приютов был создан в Сивазе, об этом в своих мемуарах пишет Каджун Карагеозян. Во время Первой мировой войны турецкое правительство для того чтобы успокоить общество основало сиротские приюты. В Александропольском приюте Амеркома до усыновления жил Мигран Казарян, который был депортирован из Битлиса. В сиротском приюте на Казачем посту работал Оганнес Трчунян-Оганнисян, он до этого чудом спасшийся от резни оказался в приюте Ерзуга, а после - в Эрзрумском приюте. **Методы и материалы:** Статья написана на методах историкосравнительного, исторического-исследовательского, историко-аналитического, исторического сопоставления и анализа и методах индукции и дедукции. Статья основана на анализе мемуаров серии «Пережившие Армянский геноцид» и на анализе аналогичных материалов, которые встречаются в научной литературе. **Анализ:** В мемуарах, пережившие геноцид, выражают глубокую благодарность миссионерам, работавшим в приютах, воспитателям, учителям. Строгое воспитание, которое сироты получали в приютах Амеркома, было важным на столько, что эти дети легли в основу благосклонного общества Советского Ленинакана. **Результаты:** Сегодня еще стоят здания Амеркома в Гюмри, они немые свидетели той эпохи, когда Александрополь более чем десятилетие являлся единственным городом милосердия в мире.

Ключевые слова: Сиротские приюты Александрополя, Сиваз, Эрзрум, Карс, попечительская деятельность, Казачий пост.

Как цитировать: Авагян И. Приюты Ближневосточного Американского комитета по мемуарам переживших армянский геноцид // «Научные труды» ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 2 (26). сс. 86-98. DOI:

ՆԱԽԱԲԱՆ. «Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարը հրատարակվում է 2004թ.-ից: Նրանում հրատարակած հուշապատճեններն են՝ «Ծննդավայրից դեպի Դեր Զոր. Քաջունի Ղարագյուղանի հիշողությունները» (2004 թ.), «Հուշեր անցյալից. Հայրապետ Տնտեսանի հիշողությունները» (2006 թ.), «1915 թ. Բիթլիսյան ողբերգություն. Միհ-

րան «Ղազարյանի հուշապատումը» (2008 թ.), «Հիշողություն մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից. Աղասի Մակարյանի հուշապատումը), 2016թ.՝ «Մեր գնդի ճակատագիրը (Հովհաննես Թոշունյան-Հովհաննիայանի հուշապատումը» (2015 թ.): 2018թ. հրատարակվել է «Մեծ Եղեռնը վերապրածները» մատենաշարի վեցերորդ գիրքը՝ «Իմ կյանքը. Գևորգ Հմայակյանի հուշապատումը»: Հոդվածը խարսխված է հուշապատումներից չորսում հուշագիրների՝ Ամերկումի որբանոցներում կատարած անդրադարձին և գործունեությանը, սույն նյութերի և գրականության մեջ առկա նմանօրինակ նյութերի ու արխիվային փաստաթղթերի վերլուծության վրա: Նպատակն է այս հուշապատումների պատմական փաստերի մեկտեղումը և համեմատումը, որից էլ բխում է հոդվածի նորույթը և արդիականությունը: Գյումրիում պահպանվել են Ռուսական կայսրության գորանոցների տասնյակ շենք-շինություններ, որոնցում տեղաբաշխված են եղել գրասրտության քաղաք Ալեքսանդրապոլի երեք նշանավոր որբանոցները՝ Սևերսկի, Կազաչի պոստ և Պոլիխոն: Հովեկներին հետաքրքրում է քաղաքի այս շրջանի պատմությունը, որում մեծ դեր են խաղում որբանոցները և դրանց լուր վկան հանդիսացող և մշակութային արժեք ներկայացնող հուշարձան շենքերը: Ուստի ուսումնասիրությունը, կարծում ենք՝ կյանքի հովեկների հոսքի ուղղորդումը դեպի այս պատմական հուշարձանները:

Սվագի ամերիկյան որբանոցը Քաջունի Ղարազյոյանի հուշերում

«Մեծ Եղեռնը վերապրածները» մատենաշարում ընդգրկված հուշապատումներում մեծաթիվ են որբահավաքի, որբանոցների, որբախնամության մասին վկայությունները: Վկայությունների հերինակավոր մասը բաժին է ընկնում Ամերկումի որբախնամ գործունեությանը: Բացի Ալեքսանդրապոլում ծավալած աշխատանքից, Ամերկումը իր մասնաճյուղերն էր սփռել Արևմտյան Հայաստանի հայաշատ վայրերում: Այսպիսիք էին Սվագի, Երզնկայի և Էրզրումի որբանոցները, որտեղ Նիար Իստ Ռելիֆի ջանքերով ընդարձակ որբահավաք գործունեություն է ծավալվել և մեծաքանակ որբեր են փրկվել ու հետ դարձել հայկական արմատներին: Սվագի որբանոցի մասին գրում է Քաջունի Ղարազյոյանը իր «Ծննդավայրից դեպի Դեր-Զոր» վերտառությամբ հուշերում [4, էջեր 36-41; էջեր 134-139]: Նա հրաշրով փրկվել և հայտնվել էր Սվագի ամերիկյան որբանոցներից մեկում: Հրաշրով ողջ մնացած տղան անցել էր որբանոցից որբանոց և ստացել նախնական կրթություն: Քաջունու հայրենակից և մանկության ընկեր Շահնազար Քէօթահեանը գրում է. «Այս անգամ նոր Կառավարութեան հրամանով դարձեալ կը հաւաքուիին, յանձնելու համար Ազգային Առաջնորդարան: Այս ի՞նչ բախտաւորութիւն ինձ նման որբերուն համար: Ու ինչ «ապտակ» ու «հարուած» մեր կեղեքիչներուն: Զածի Աղան չուզեր զիս յանձնել, սակայն հրամանը խիստ է ու ստիպողական, ի վերջոյ սակայն կ'ըսէ.- Գնա՛, տղա՛ս, քեզ դպրոց կը դնեն, մարդ կ'ըլլաս. մեզ մի՛ մոռնար... Ու կ'երթանք Արամեան Դպրոց-Որբանոց, ու զիս կը յանձնեն Առաջնորդարան: Հոս կը սպասեն քոյրս եւ քեռայրս, նաեւ մեծ թուով (շուրջ երեք հարիւր) ինձմէ առաջ քերուած որբ տղաք: Քրոշս ուրախութեանը չափ չկայ, կը գրկէ զիս, կը համբուրէ...ալ ազատուած եմ Հայութեան համար, Հայ եկեղեցիին, Հայ Գիրին ու հայ Շունչին համար: Հայերինս չեմ մոռցած. քանի մը օր չանցած՝ յստակ ու մաքուր կը խօսիմ մայրենի լեզուս. չեմ մոռցած չորս հովերուն ցրուած հարազատներս, անոնց անունները եւ մանկութեան յիշա-

տակները» [9, էջ 124]: Քաջունին, այս հրամանի համաձայն, հեռանում է թուրքի կողմից առևանգված ավագ քրոջ ընտանիքից և հայունվում Սվագի որբանցում: Լ. Ազատեանը բերում է մի ցուցակ, ըստ որի. «Զինադադարի շրջանին՝ ողջ մնացած որբերուն թիւր նոյնիսկ հարիւր հազարի չի հասնիր»: Սեբաստիա-Մարզուանի տարածքներում որբերի թիւր ըստ այդ ցուցակի հասնում էր 5600-ի [1, էջեր 36-37, 39, 104]: Հատ Շ. Քեռահեանի՝ Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատուց մարմինը (Ամերկում՝ Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտե)² «նախախնամական» դեր է կատարում վերապրող որբերի համար և իր փրկարար ձեռքը հասցնում մինչև Սեբաստիա՝ Արամյան վարժարան՝ Հողդարի բարձունքին կանգուն նախկին SIVAS TEACHERS' COLLEGE-ը փոխակերպելով նախակրթարանի աստիճանով որբանց-դպրոցի: Այս մասին գրում է նաև Լ. Ազատեանը. «Արամեան որբանց-վարժարանը կընդունի հարիւրատր որբ երեխաներ, որոնք կը փոխադրուին նախկին Սվագի Ամերիկեան Ուսուցչական Գոլէճը: Այս հաստատութիւնը կ'ընդունի 300-է աւելի մանչեր՝ 5-16 տարիքի: Շենքին երրորդ յարկը երեխաներու ննջարաններն էին» [1, էջեր 31-32]: Քաջունին իր ինքնակենսագրությունում գրում է. «Ես ապրեցի թուրքական և հայկական որբանցներում, որտեղ և ստացա իմ նախնական կրթությունը»: Որբանցի թժշկական հանձնաժողովի որոշմամբ Քաջունու ծննդյան թիվ է ընդունվում 1906-ը: «Հայրս փոքրամարմին էր, այդ պատճառով էլ նրան տվեցին 1906 թ. ծննդյան վկայական, և վերջապես փոքր երեխա էր, լավ չէր հիշում, բայց ենթադրում էր, որ ծնվել է 1904 թ.», -ասում է ավագ դուստրը: Բժիշկները փոքր երեխաների ծննդյան թիվը որոշում էին բերանում ծթկած կաթնատամների և հիմնական ատամների քանակով: Քաջունին հաճախ է անդրադարձել որբանցում իրականացվող պատժածներին: Ավագ դստեր պատմածներից ուշագրավ է այն, որ մեղավոր երեխայի վրա կախել են համապատասխան պիտակով ցուցանակ, օրինակ՝ «ստախոս», և որբերին շարք կանգնեցնելուց հետո պտտեցրել շարքերի միջով, որից հետո մեղավորը ամրող օրը կրել է այդ պիտակը: Դաստիարակության այս տարբերակի մասին հիշում են նաև Ալեքսանդրապոլի ամերկումցիները: Քեմալական շարժման ժամանակ հայկական որբանցները փոխադրվում են Մերձավոր Արևելքի արաբական երկրներ և Հունաստան: «Թուրքիոյ ներքին գաւառներուն մէջ ամեն օր շարդի ու մահուան սարսափին տակ ապրող հայ որբերը հետզիետ կը փոխադրուին ապահով երկիրներ: Մեբաստիոյ 5600 որբերը՝ Յունաստան, Խարբերդի 5300 որբերը՝ Լիբանան եւ Պաղեստին: Ամերիկեան Նպաստամատոյցը եւ ՀԲԸՍ-ն իրենց վրայ կ'առնեն արևմտահայ որբութեան գրեթէ կեսէն աւելիին հոգատարութիւնը Յունաստանի, Լիբանանի, Պաղեստինի եւ Եգիպտոսի մէջ: Կը բացուին կանոնաւոր դպրոցներ, արհեստանոցներ, կը կազմուին մարմնակրթական միութիւններ...» [3, էջ 948]: Շ. Քեռահեանը հիշում է. «Օգտուելով Լոզանի Դաշնագրի տրամադրութիւններէն՝ Անկարայի Կառավարութեան հետ եղած մասնաւոր կարգադրութեան իբրեւ հետեւանք՝ Նպաստամատոյցը կորոշէ Սեբաստիոյ, ինչպէս նաեւ Խարբերդի, Սուրիիոյ եւ այլ վայրերու իր որբանցները փոխադրել Պոլիս, առաւելապէս Յունաստան... Նոյեմբերի մէջ ենք (1922) եւ արդէն իսկ առաջին կարաւանը պատրաստ է դէպի Սամսոն ճամբայ ելլելու...» [9, էջ 154]: «Որբե-

² American Committee for Relief in the Near East- ACRNE

բու զանգուածային փոխադրութիւնը դէպի Սուրբիա եւ Լիբանան տեղի կ'ունենայ 1922-1923 տարեշրջանին, Կիլիկիոյ պարպումին հետեւանքով: Նպաստամատոյցի վարիչները, մտահոգուելով յոյն-թքքական բուռն պատերազմի հետեւանքներով, կ'որոշեն Թուրքիոյ հողամասին վրայ, հաւասարապէս հոգ տանել որքան քրիստոնեայ, նոյնքան եւ թուրք որբերուն: Նպաստամատոյցը, ներքին գաւառներուն մէջ գտնուող որբերը՝ Կեսարիայէն, Գոնիայէն, Մարզուանէն, Սվազէն, Սամսոնէն եւ Տրավիզոնէն, ցամաքի ճամբով կը փոխադրէ Պոլիս, ուրկէ նաւով՝ Յունաստանի Փիրէ նաւահանգիստը, եւ կը տեղատրէ զանոնք Յունաստանի 13 որբանոցներուն մէջ: Հազարաւոր որբեր Սուրբիա եւ Լիբանան փոխադրելու ծանր աշխատանքն ու պատասխանատուութիւնը Ամերիկեան Նպաստամատոյցը կը յանձնէ մէծ հայասէր, զուիցերիացի միսիոնար՝ Եակոր Քինձլըրին...» [1, էջեր 36-37, 39 104]: Քաջունին չափահաս որբերի նման նավից իջնում և մնում է Կ. Պոլսում: Որբերի՝ Յունաստան տեղափոխվելու պատճառով բավականին երկար ժամանակ կտրվում է Շահնազարի և Քաջունու կապը:

Որբանոցներուն ուսուցիչների և սաների ջանքերով հրատարակվել են պարբերաթերթեր: Սվազի որբանոցում Շ. Քեօթահեանի ջանքերով հրատարակվել է «Ալիս» պարբերաթերթը. «Տպաքանակ»-ս էր միայն վեց. անոնցմէ մին կը դրկէի նախապէս Գոլէճ, այժմ՝ Որբանոցի վերածուած ուսուցիչներուն, ուրիշ օրինակ մը՝ Աղջկանց Որբանոց եւ մէկն ալ՝ չափահաս աղջիկներու ապաստանարան-աշխատանոցը» [9, էջեր 126-129]: Ամերկում որբանոցներում երեխաները սովորում էին կարել մաշիկներ, գործել գուլպաներ, գորգեր և կարպետներ, զբաղվում էին դերձակությամբ: Լ. Աղատեանը գրում է. «Այս գոլէճ-որբանոցին դիմացը կար մէծ աշխատանոց մը, ուր մէծ որբերը, դպրոցէն ետք, կուսանէին ատահձագործութիւն, կօշկակարութիւն եւ դերձակութիւն: Առանձին աղջկանց նախակրթարան վարժարան-որբանոց մըն ալ կար նախկին Հայկական Ազգային հիմանդանոցին տեղը: Ուրիշ մը, չափահասներու տունը երիտասարդ կիներ գորգ գործել, կարել, հիւսել եւ տնային տնտեսութիւն կը սորվէին: Ամերիկեան Միսիոնարական հիմանդանոցը, որ մօտիկ էր որբանոցին, կը հասնէր որբերուն եւ հայերուն նոյնիսկ երեսն թուրքերու կարիքներուն: Մանչ ու աղջիկներուն որբանոցները Սվազի մէջ կը փակուին 1922-ի վերջերը» [9, էջեր 32-33]: Աղջկանց որբանոցում էր պատսպարվել Քաջունու հորեղբոր աղջիկը՝ Համեստուիին: Սվազի որբանոցի տղաների և օրիորդների համազգեստների, կոշիկների մասին պատկերացում են տալիս պահպանված հազվագյուտ լուսանկարները:

Մատենաշարի երրորդ հուշապատումը Միհրան Ղազարյանի «1915թ. Բիթլիսյան ողբերգություն»-ն է: Միհրանը Ալեքսանդրապոլի Ամերկում որբանոցում է հանգրվանել Անդրանիկի գորբերի հետ Բիթլիսից նահանջելուց հետո: Այս տեղեկությունը հայտնում են թոռոնուիին և դուստրը: Բիթլիսեցի Նանեն Ալեքսանդրապոլի որբանոցից որդեգրում է Միհրանին և հարազատ մոր նման մէծացնում ու խնամում տղային: Սակայն Միհրանի հուշագրությունը ավարտվում է 1918 թ. աշնան մասին հիշատակությամբ, եթք նա նշում է, որ մինչև սույն թվականը մնացել է Դիլիջանի Ամերկում թիվ երեք որբանոցում: Այս բացառիկ տեղեկությունով էլ ավարտվում է Միհրան Ղազարյանի՝ պատմականությամբ հագեցած հուշապատումը [6, էջ 226]:

Կարսի ամերիկյան որբանոցը Աղասի Մակարյանի հուշերում

Մատենաշարի չորրորդ հուշապատումը Աղասի Մակարյանի «Հիշողություն մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից» հուշապատումն է: Աղասին ներկայացնում է 1920թ. Կարսի ամերկումի որբանոցում թուրքերի կազմակերպած ջարդը [7, էջեր 29-32]: «Օսմանյան բանակը Սարիղամիշի կողմից մոտենում էր Ղարս քաղաքին: Թուրքերն արդեն գրավել էին Մազրա կայարանը և քանդել երկաթզիծը, ինչի պատճռով ժողովրդի ունեցվածքով, այդ թվում և մեր, բարձած վագոններով գնացքները կանգնած էին Ղարս կայարանում. քաղաքը շրջափակված էր»: Կարսը լցված էր զաղթականներով, որոնք «զայլ տեսած ոչխարի հոտի պես իրենց այս ու այն կողմ էին նետում»: Խոր աշուն էր: Ցուրտն ու խոնավությունը թափանցում էին մարդկանց մարմիններից ներս ու մտնում ոսկորների մեջ, ժողովուրդը, տուն ու տեղ թողած, փրկվելու համար փախչում էր դեպի «Չուխուր մայլա»³, այնտեղից՝ դեպի Արգինեի ձորը: Սակայն այստեղ նույնպես ճանապարհը փակ էր: Չորքի և թուրք խուժանի գնդակները հնձում էին փախստականներին: Գնդակների տարափից պրծնելու համար ժողովուրդը խնդրում էր ամերիկացիներին, որ թույլ տան, մարդիկ մտնեն որբանոցի շենքը: Սակայն ամերիկացիները, մտրակը ձեռքերին, ծեծում էին ներս մտնել ցանկացողներին, շատերի գլուխները կոտրում ու արգելում էին մտնել որբանոցի շենք: Բայց ժողովրդի ալիքը այնքան մեծացավ, որ նրանք այլևս չկարողացան դիմադրել, և բոլորը լցվեցին շենք, այդ թվում՝ և Մակարյանների ընտանիքը: Այս ներխուժումը բերում է նրան, որ թուրքերը գաղթականներին կոտորելու նպատակով ներխուժում են որբանոցի շենք և սպանդ կազմակերպում:

Ղարադաղի ամրոցի կողմից եկող թուրքերի գնդակները սպանում ու վիրավորում էին ճանապարհներին ու փողոցներում գտնվող գաղթականներին: Գնդակները նույնիսկ թափանցում էին որբանոցի լրսամուտներից ներս, սպանում և վերքեր հասցնում ինչպես որբերին, այնպես էլ այդտեղ ապաստանած հայերին: Որբերը, կանայք ու երեխաները լալիս էին: Սակարյանը գրում է. «Այստեղ է ասված.«Մերը մոռացության է տվել զմանուկն»: Ներխուժելով քաղաք՝ ասկյարները մտան որբանոցի շենքը, սկսեցին սվինահարել ու գնդակահարել ժողովրդին, հենց այստեղ էլ՝ մեր աչքերի առաջ, սվինով ու հրացանի կրակոցով հիսունյոթ տարեկան հասակում սպանվեցին հայրիկս՝ Ալեքսանը, և երեսուն տարեկան ավագ եղբայրս՝ Լևոնը, որոնք անմեղ ու անզեն ծվարել էին որբանոցի շենքում: Նրանց աճյունները կես դարուց ի վեր հանգչում են անգերեզման»: Հոգեբանական ծանր իրավիճակում են գրվել տողերը տասնամյակներ անց: Արգինեի ձորում մուլթը վրա էր հասել, որբանոցի շենքից լսվում էին մոլեզին ճիշեր՝ սպանեցին՝ տարա~ն... Ըստ հուշագրի՝ առևանգում էին երեխաներին, ջահել աղջիկներին, գեղեցիկ հարսներին ու կանանց, գերեվարում տղամարդկանց, հետո սպանելու նպատակով: Հոգեբանորեն շատ ծանր էր լրսացնել այդպիսի արյունալի ու մղձավանջային գիշերը: Երկար ու ցավալի տանջանքներից հետո բացվեց արյունոտ առավոտը, երբ դեռ լսվում էին հրացանի կրակոցները, վիրավորների ծանր հառաչանքները ու տանջալի տնքոցները: Շատերը օրերով չէին քնել, շատերն էլ կորցրել էին իրենց հարազատներին ու

³ Թարգմանաբար՝ Զորի թաղ:

Երեխաններին: Թուրքական հրամանատարությունը Արգինայի ձորում և ամերիկյան որբանոցի շնչերում ողջ մնացած ընտանիքներին հավաքեց և ասլյարների հսկողության ներքո քշեց դեպի Ղարս քաղաքի կենտրոնը: Ասլյարները սկսեցին առանձնացնել տղամարդկանց, որոնց ձակատազիրը հետազայում հայտնի դարձավ. ոչ մեկը ողջ չէր մնացել: Նրանց մեջ էին նաև Մակարյանների ընտանիքի ողջ մնացած անդամները: Թուրքերը, կանանց ու երեխաններին անցկացնելով կամուրջը, տարան ու ներկալեցին քաղաքում գտնվող զորանոցներում: Ստեղծված վիճակը Աղասու համար սոսկալի դարձավ: Այստեղ նա կորցրեց մորը, փոքր եղբօր՝ Գարեգինին, իինզ տարեկան քրոջը՝ Հոփիսիմեին: 1920թ. աշնան ցուրտ օրերին՝ որպես հալածված մի թռչուն, նա ծվարեց քաղաքի մեծ զորանոցներից մեկում:

**Երգնկայի, Էրգրումի և Ալեքսանդրապոլի որբանոցները Հովհաննես Թոշունյան
- Հովհաննիայանի հուշերում**

Ալեքսանդրապոլի Կազաչի պոստի որբանոցում էր աշխատանքի մտել Հովհաննես Թոշունյան-Հովհաննիայանը՝ նախ Երգնկայի, ապա Էրգրումի ամերկումի որբանոցներում հանգրվանած որբը: Նրա հուշերը կազմել են մեր մատենաշարի հինգերորդ գիրքը, որ վերնագրված է «Մեր գնդի ձակատազիրը»:

«Առավոտ Իբրահամ աղան գնաց եղբօրս՝ Շարությունին բերեց: Դարձավ ինձ ու քրոջս. «Արե՛ք, հաց կերե՛ք, որ ձեզ տանեմ հանձնեմ հայոց շտաբը, որտեղ որ հավաքում են որբերին»: Բոլորը խառնվեցին իրար՝ Դուրսունը, Ֆաթիման, խանումս, թոփալ Հուսեյնը, չիդեն՝ ինչ էնեն: Համբուրեցին ամենը, իրենց համար գովեցին, քույրիկս էնպիսի մի լաց էր դրել, որ չգիտեմ՝ ինչ անեմ» [8, էջեր 116-119]: Աղջնակը չէր ցանկանում բաժանվել քրդուիի քույրիկից: Իբրահամ աղան երեխաններին տանում է Երգնկայի հայոց շտաբը: Իբրահամ աղան պատմում է, թե ինչ դժվարությամբ է պահել երեխաններին: Շտաբում շնորհակալություն են հայտնում նրան և խոստանում օգնել: Հետաքրքրվում են, թե Հովհաննեսը հայերեն զիտի, երեխանները արտասահմանում մարդ ունե՞ն: Իմանալով, որ երեխանների ավագ եղբայրը՝ Շմայակը, և հորեղբայր՝ Պետրոս ամին, Ռումինիայում են, հետաքրքրվում են հասցեով: Երեխան ասում է հասցեն՝ «Ֆոթիշեն քաղաք, Սնդիելի 55, Թոշունյան Պետրոս⁴»: Հովհաննեսը գրում է. «Հայրիկս որ նամակ էր գրում, ես միշտ մոտն էի, դրա համար էլ հասցեն հիշում եմ»: Երեխաններին ընդունողը նոյն օրը հեռագիր է ուղարկում հորեղբօրը՝ Ռումինիա, որ զան: Մինչ հարազատների զալը երեխաններին տանում են որբանոց, խոստանալով, որ էնտեղ իրենց լավ կնայեն: Իսկ Հազարվարդը շարունակում էր բարձր լացը, կարծես սիրտը վկայում էր, որ զլիին փորձանք պիտի զա:

Հովհաննեսը նկարագրում է Երգնկայի հայկական որբանոցի տեղադրությունը: Այն գտնվում էր հայոց թաղի Ժամի հրապարակի արևմտյան կողմում՝ Քյամախի ձանապարհի վրա գտնվող մեծ շենքում, որի առջևում պարտեզ կար: Հովհաննեսը պատմում է հիգիենայի կազմակերպման մասին. իրենց ներս մտնելուց հետո մայրապետները երեխաններին տանում, մազերը խուզում են, աղջկներին տանում են երկրորդ հարկ,

⁴ Թոշունյանների այս ճյուղը երկար տարիներ հովանավորեց «Թոշունյաց տան» գործունեությունը Գյումրիում:

տղաներին՝ առաջին: Որբանոցում երեխաներին լավ էին նայում. թե՛ ուտելիքն էր լավ, թե՛ մաքրությունը: Մի թուրքական սպա կար՝ ազգությամբ հայ, Խարբերդից, նա երեխաներին մարզանք էր սովորեցնում, նշան բռնել, երգեցողություն: Պատի վրա կլոր շրջան էր գծում ու ասում. «Ամենքդ քան քար հավաքե՛ք ու աշխատե՛ք խփել գծի մեջտեղը: Դա հավասար է զենքից կրակելուն»: Որբերի թիվն ավելանում էր, ամեն օր քրդերը բերում էին նորերին ու փող ստանում: Դերսիմից մի հայ աղջիկ բերեցին՝ տասնչորս տարեկան՝ անունը Եվա: Հայոց կոտորածի մասին քրդերեն երգ էր երգում: Էնպես լացով էր երգում, երեխաները ու մայրապետները, նրա շուրջը հավաքված, հետք լալիս էին: Որքան էլ քարսիրտ մարդ լիներ, այնտեղ լաց կլիներ: Նա երգելով բողոքում էր աստծուն. «Դա-լիկո-դա-լիկո քյաֆուր խոդեղա զուլում է օսման»: Երեխաներին դաս տվող խարբերդի սպան մի իրիկուն գալիս ու տեսնում է, որ որբերը հավաքվել են աղջկա շուրջը, աղջիկը երգում է, երեխաներն ու մայրապետները՝ լաց լինում: Սպան քարկանում է մայրապետների վրա և հաջորդ օրը՝ առավոտյան, փորձում է երեխաների հոգեվիճակը սփոփելու նպատակով թատերական ներկայացնում կազմակերպել: Նա տղաներին դերեր է բաշխում՝ սովորելու համար և բեմադրում «Բազազ Հարությունի» թատրոնը: Հովհաննեսը գրում է.«Բոլորին պաշտոններ տվեց, մի մեծ քթով տղա կար, նրան՝ սուլթան Համիդի, մեկին՝ ոռուսի թագավորի, մյուսին՝ Բազազ Արտեմի, ինձ էլ աղջկա պաշտոն տվեց, սկսինք պարապելը: Երբ թատրոնը ներկայացրինք, նորից մի ուրիշը սկսինք պարապել՝ «Սատանան, տերտերը և մարդը»: Շատ խնդալու թատրոն էր, ես սատանայի դերը տարա: Երեքն էլ վազում են. սատանան՝ առջնից, տերտերը՝ նրա հետևից, մարդն էլ՝ տերտերի հետևից, վազում են, մեկը մյուսին չի հասնում. կլոր ֆոռում ենք: Այս թատրոնը դուրս ներկայացրինք, սադ որբերը ծիծառում էին»: Հովհաննեսը պատմում է որբանոցում հիգիենայի մասին, շորեր բաժանելու, սարոն տալու և բաղնիք տանելու մասին [8, էջեր 116-119]: Էսպես մի ամիս երեխաները մնացին որբանոցում: Մի օր՝ առավոտ, տասներկու ֆուրգոն բերեցին, երեխաներին տեղավորին ֆուրգոնները. վեց ֆուրգոն՝ տղա, վեց ֆուրգոն՝ աղջիկ և հանկարծակի ուղևորվեցին դեպի Էրզրում: Էրզրումի ամերկումի որբանոցի բակից, երբ երեխաները խաղում էին, առևանգում են գեղեցկուիի Հազարվարդին, մի քանի օր քուրերը և տղաները փնտրում են աղջնակին, սակայն ապարդյուն:

Հովհաննեսը Անդրանիկի բանակից գորացրվելուց հետո աշխատանքի անցնում Ալեքսանդրապոլի Կազաչի որբանոցում: [8, էջեր 210-211]: «Մեզ ընդունողի անունը Հաջոն էր: Մեր գնդի արողի նաշալնիկն էր»: «Դու եղել ես մեր Անդրանիկի բանակո՞մ, -մի քանի հարցեր տվեց, ես պատասխանեցի, -լա՞վ, ես հիմա տեսնեմ, թե որտեղ քեզ նշանակեմ»: Էդ պահին ներկաներից մեկն ասում է, թե Աճեմյանն է եկել: Հաջոն էլ ելնում է Աճեմյանին դիմավորելու: Եկողը՝ Աճեմյանը Վարդանի հայրն էր, ով մեծ ներդրում էր ունեցել Կազաչի պոստի որբանոցի գործունեության մեջ: Աճեմյանը խոսում էր վանեցնոց լեզվով: Նա ձիապան է ուզում, քանի որ ձիապան տղան հիվանդացել էր: Հաջոն Հովհաննեսին է ուղարկում. «Էս լավ տղուն տար, պարո՞ն Աճեմյան»: Աճեմյանն էլ դառնում է Հովհաննեսին. «Արի գնանք, տղա՝ ջան, արի՝, գնանք ճաշարան»: Նա կանչում է ճաշարանի վարիչին ու ասում, որ տղային ճաշարանից միշտ ճաշ տա, օրը երեք ան-

զամ: «Էս քո հաց ուտելու տեղը, արի գնանք պահեստը,-պահեստի պետին կարգադրեց,-էս տղին ինչ որ կզա կուզե, կտաս»: Ապա ուղեկցում է ձիանոց, ծանոթացնում գործին ու բանալին տալիս նրան: «Տղա՛ ջան, շատ մաքրասեր պիտի լինես, ձիերի վրան մաքուր պիտի պահես, թամբքերն էլ միշտ մաքո՞ր պահե, էս սրբիչները դրա համար են: Առավոտները ամերիկացիները ձիով գնում են քաղաք՝ աշխատանքի: Էս ձին կապիտան Հեքմանինն է, էս մի ձին էլ՝ կապիտան Յարոյինը, [2, էջեր 436-438]: Էս մեկն էլ միստր Թոմսինն է, ամենքն իրենց համար ձի ունեն, դու միշտ էստեղ կլինես: Էստեղ մի հայ կա՝ ձիու բժիշկ, նա քեզ կասի՝ ինչ անես»: «Աճեմյանը ամբողջ Կազաչի պոստի պահեստների, որբերի ճաշարանների ղեկավարն էր: Ես շուտով ճանաչեցի կապիտան Հեքմանին, Յարոյին: Իմ աշխատանքի երրորդ օրն է, իրիկունք ձիերին մաքրում էի, մեկ էլ մի շուն՝ պոչը կտրած, մտավ գոմը: Զիերը խրտնան, ես էլ մի քար առա ու խփեցի շանը, ես շունը սկսեց վնաստալը: Մի ամերիկացի եկավ ինձ կանչեց դուրս, սկսեց խոսել՝ շանը ցոյց տարվ. էս անտեր շունն էլ մախսուս ավելի էր վնաստում: Ակսեց ինձ ծեծելը, ես ձայն չեի հանում, մի լավ ինձ ծեծեց: Մտի՝ կ արեք էս անաստվածին, մի շան համար ինձ ծեծեց: Անցավ բավականին ժամանակ, մեր Փելշերը՝ Համբարձումը, կանչեց ինձ թե. «Արի՛, նորություն լսի՛ թ: Եղ խելառ ամերիկացի բժիշկը հիմա հարձակվել է հիվանդանոցի որբերի վրա, հիվանդ երեխոց սկսել է ծեծելը, քույրերը հասել են երեխանց օգնության, դառել է քույրերին ծեծել: Հիմա տարել են քաղաք՝ ամերիկացիների շտաբը՝ կապիտան Հեքմանի մոտ»:

Հայաստանի ազգային արխիվում պահպանվել է ՀՀ վարչապետին ուղղված Ալեքսանդրապոլի բժիշկների միության գրությունը՝ թիվ 142. «Ալեքսանդրապոլի Բժշկական միությունը և «Կարմիր խաչի» Վարչության անդամները, մասնակցությամբ Հայաստանի «Կարմիր խաչի» Կենդրոնական վարչության փոխնախագահ Վ. Արծրունու, 1920թ. օգոստոսի 15-ի արտակարգ նիստում քննության առնելով ամսոյ 13-ին Կազաչ Պոստում տեղի ունեցած քստմնելի դեպքը և գտնելով, որ 1. ամսի 13-ին Ամերիկյան Նպաստամատուց Կոմիտեի Ալեքսանդրապոլի բժշկական մասի բժիշկ Հոսոռը անխնա ձևով ծեծել է հիվանդանոցի որբերին յուր ձեռքի մտրակով, շատերին անելով արյունլվա... նա նման վերաբերմունք միշտ ցոյց է տվել ինչպես Պոլիգոնի, այնպես էլ Կազաչի Պոստի հիվանդանոցներում, անգութ կերպով ենթարկելով ծեծի 2. որ նույն դեպքի ժամանակ ենթարկվել են անարգանքի և լայր վերաբերմունքի հիվանդանոցի մի քանի գթութեան քույրեր, միայն նրա համար, որ կամեցել են պաշտպանել ծեծվող երեխաներին և կապիտան Դինչիրֆիլդի ուշադրությունն են հրավիրել այդ տիսուր և վայրենի վարմունքի վրա, իսկ քույրերից մեկին նույնիսկ ուզեցել են միլիցիաների ձեռքով բանտարկել պ. Դինչիրֆիլդի հրամանով 3. որ նույն հիվանդանոցի բժիշկ Ալթունյանը, որը ենթարկվել էր մտրակով խիստ ծեծի նույնպես որբ երեխաներին պաշտպանելու համար ճակատից վերք ստանալով... ժողովն որոշեց. ա. որ բժիշկ Հոսոռը՝ որպես հոգեպես անհավասարակշիռ մի պաշտոնյա, չի կարող մնալ այդ աստիճանի պատասխանատու պաշտոնի մեջ՝ արատավորելով ամերիկյան մեծ և մարդասեր ժողովորի անունը բ. որ պ. Դինչիրֆիլդը յուր կոպիտ ու անքաղաքավարի վարմունքով դեպի գթության քույրերը վիրավորել է գթության քույրերի ամբողջ կորպորացիան, որ այնքան անձնվի-

րաբար իր կյանքի գնով աշխատել է հայ որբերին խնամելու և դաստիարակելու ծանր գործում. ժողովը յուր զայրույթն է հայտնում որբանցի մյուս բժիշկների վերաբերմունքին այն քար անտարբերության համար, որ ունեցել են նոքա դեպի որբերը և նոցա տանջող բժիշկը, որպես հիվանդ մարդու: Ժողովը վճռեց ուղարկել սույն որոշումը Ամերիկայի միսիայի ներկայացուցիչ պ. Եարոյին, Հայաստանի կառավարությանը, և եթե նոցա ձայնը չլսվի, նաև Վաշինգտոն՝ Ամերիկյան մարդասեր կառավարությանը [2, էջեր 346-348]: Բողոքից հետո բժշկին հետ են ուղարկում ԱՄՆ՝ ստվերող անձնավորությունից մաքրելով Ամերկումի մարդասեր գործունեությունը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Ամերիկյան Նպաստամատույցը լայնածավալ գործունեություն իրականացրեց Արևմտյան Հայաստանում՝ որբահավաքների միջոցով հայկական ընտանիքներ վերադարձնելով առևանգված որբերին: Ալեքսանդրապոլում Ամերկումի ծավալած ամենաերկարատև որբախնամ գործունեությունը փրկել ու դաստիարակել է հազարավոր որբերի: Հուշագիրները երախտապարտ են Նիար Իս Ռիլիֆին, միսիոներներին, որբանոցներում և որբախնամ հիվանդանոցներում աշխատող բժիշկներին, քույրերին, դաստիարակներին, ուսուցիչներին: Ամերիկյան խստաբարո դաստիարակությունը, որ հայ որբերը ստանում էին որբանոցներում, կարևոր էր այնքանով, որ այս մասուկները դարձան Լենինականի քարեկիրք հասարակության հիմքը: Այսօր որբանոցների շենքերը դեռ կանգուն են Գյումրիում: Շենքերից մեկում Երրորդ հանրապետության տարիներին գործեց «Թոշունյաց տուն» մանկատունը: Հուշարձան շենքերը լուս վկաներն են այն ժամանակաշրջանի, երբ Ալեքսանդրապոլը ավելի քան մեկ տասնամյակ միակ գթասրտության քաղաքն էր աշխարհում: Նա այսօր արդեն գրավում է հովեկներին, գիտնականներին, ցեղասպանագետներին, նաև հնագետներին, և հեռու չէ այն օրը, երբ այդ կիսավերակ կառույցներում կկատարվեն ուսումնասիրություններ, նաև պեղումներ՝ գթասրտության օրերին վերաբերող նյութերով Ալեքսանդրապոլի պատմությունը համալրելու համար:




Սվագի որբանոցի շենքը



Սվագի որբանոցի
աղջիկների համազգեստը



Սվագի որբանոցի
տղաների համազգեստը



Կազաչի պոստի որբանոցը
Ալեքսանդրապոլում



Սևերսկու որբանոցը
Ալեքսանդրապոլում



Սևերսկու որբանոցի շենքն
այս պահին

Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն

1. Ազատյան Լ. *Հայոց որբերը Մեծ եղեռնի*: Լու Անջելես: 1995: Հ. 1: 240 էջ:
2. Ալեքսանյան Կ. *Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գալառում 1914-1922 թթ.* Փաստաթղթերի ժողովածու. ՀՀ ազգային արխիվ: Եր.: «Հայկարի» հրատ.: 2015: 511 էջ:
3. Ահարոնեան Գ. *Ցուցամատեան Մեծ եղեռնի 1915-65, հրատարակութիւն «Զարթօնք» օրաթերթի: Պէյրութ: «Ատլաս» հրատ.: 1965. 1119 էջ:*
4. Ավագյան Ի. *Մեծ եղեռնը վերապրածները: Ծննդավայրից դեպի Տէր-Զոր. Քաջունի Ղարազրողանի հիշողությունները*: Գյումրի: «Էլլորադո» հրատ.: 2004: 96 էջ:
5. Ավագյան Ի. *Մեծ եղեռնը վերապրածները: Մերսասիայի որբանոցից Մայր Հայաստան. Քաջունի Ղարազրողանի հուշապատումը*: // Մեծ եղեռն - 90: Հանրապետական գիտական նատաշրջանի նյութեր: Գյումրի: «Դպիր» հրատ.: 2005. էջ 134-138:
6. Ավագյան Ի. *Մեծ եղեռնը վերապրածները: 1915. Բիթլիսան ողբերգություն. Միհրան Ղազարյանի հուշապատումը*: Գյումրի: «Դպիր» հրատ.: 2008: 312 էջ:
7. Ավագյան Ի. *Մեծ եղեռնը վերապրածները: Հիշողություններ մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից. Աղասի Մակարյանի հուշապատումը*: Գյումրի: «Էլլորադո» հրատ.: 2015: 116 էջ:
8. Ավագյան Ի. *Մեծ եղեռնը վերապրածները: Մեր գնդի ճակատագիրը. Հովհաննես Թթչունյան-Հովհաննիայանի հիշողությունները*: Գյումրի: «Էլլորադո» հրատ.: 2016: 336 էջ:
9. Քեօքահեան Շ., Ցուշեր ու նիշեր, անձեր ու անցրեր նախաեղեռնէն մինչև ներկայս: Լու Անձելը: «Ալկո փրինթինգ քոմփանի» հրատ.: 1990: 376 էջ:

R e f e r e n c e s

1. Aharonian. G. *The Memorial Book of Great Crime 1915-65, edition of "Zartongq" daily* [Yushamatean Mets Yegherrni 1915-65, hratarakut'yun <> Zart'venk'>> orat'ert'i] Beirut: "Atlas" publication, 1965. 1119 p. (in Armenian)
2. Aleksanyan K. *Western Armenian Emigration in Alexandropol Province 1914-1922. Collection of Documents, National Archives of Armenia* [Arevmtahay gaght'akanut'yuny Alek'sandrapoli gavarrum 1914-1922 թ'թ. P'astat'ght'eri zhoghovatsu, Hayastani azgayan arkhiv]. Yerevan: "Haykarli" LLC publication, 2012. 511 p. (in Armenian)
3. Avagyan I. *Those who have survived the Armenian Genocide. On the Way to Der-Zor. Memories of Cajuni Gharagozyan* [Mets yegherrny verapratsnery. Tsnnadavayrits's depi Ter-Zor. K'ajuni Gharagozyani hishoghut'yunnery]. Gyumri: "Eldorado" publication, 2004. 96 p. (in Armenian)

4. Avagyan I. *From Sebastia's Orphanage to Mother Armenia (Memories of Kajuni Gharagozyan)* [Sebastiayi vorbanots'its" Mayr Hayastan (K'ajuni Gharagozyani hushapatumy)] // The Great Genocide-90. Proceedings of the Republican Scientific Session. Gyumri: "Dpir" publication, 2005. 134-138 pp. (in Armenian)
5. Avagyan I. *Those who have survived the Armenian Genocide. 1915. Bitlis tragedy: Memories of Miiran Ghazaryan* [Mets yegherrny verapratsnery. 1915. Bitlisyan voghbergut'yun .Miiran Ghazaryani hushapatumy]. Gyumri: "Dpir" publication 2008. 312 p. (in Armenian)
6. Avagyan I. *Those who have survived the Armenian Genocide. From the History of our Family. Memories of Aghasi Makaryan* [Mets yegherrny verapratsnery. Hishoghut'yun mer yntanik'i patmut'yan mi k'ani paherits'. Aghasi Makaryani Hushapatumy]. Gyumri: "Eldorado" publication, 2015. 116 p. (in Armenian)
7. Avagyan I. *Those who have survived the Armenian Genocide*, The retreat of our regiment: *Memories of Hovhannes Trchunyan-Hovhannisyian* [Mer gndi chakatagiry. Hovhannes T'rach'unyan-Hovhannisyani hushapatumy]. Gyumri: "Eldorado" publication, 2016. 336 p. (in Armenian)
8. Azatyan L. *Armenian Orphans of the Genocide* [Hay vorbery Mets yegherrni]. Los Angeles: 1995. v.1, 240 p. (in Armenian)
9. Keotahian S., *Memoirs. Heroes and characters, people and holes from the beginning to the present* [Yusher u nisher, andzer u ants'k'ernakhayegherrnen minch'ev nerkays]. Los Angeles: "Alko Printing Company" publication, 1990. 376 p. (in Armenian)

Ըստունվել է / Принята / Received on: 17.07.2023
Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 08.08.2023
Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 27.11.2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Ինգա Էդուարդի ԱՎԱԳՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկն., դոցենտ, «Կումայրի»
պատմամշակութային արգելոց-թանգարանի տնօրեն, ԳԱԱ Շիրակի
հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, Գյումրի, <<,
Էլ. հասցե՝ inga.avagyan.76@mail.ru <https://orcid.org/0000-0001-6260-1467>

Inga Eduard AVAGYAN: PhD in History, Associate Professor, Director of the "Kumayri" Historical and Cultural Preserve-Museum, researcher at Shirak Center for Armenian Studies NAS, Gyumri, RA,
e-mail: inga.avagyan.76@mail.ru <https://orcid.org/0000-0001-6260-1467>

Инга Эдуардовна АВАГЯН: канд. ист. наук, доцент, директор Историко-культурного музея - заповедника «Кумайри», научный сотрудник ШЦАИ НАН, Гюмри, РА,
эл. адрес: inga.avagyan.76@mail.ru <https://orcid.org/0000-0001-6260-1467>